ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Ծաղկաշեն 3-րդ փող. N 31
էլ-փոստ tsaghkashen.gegharquniq@mta.gov.am
Հեռ. 077 870323
27.02.2018թ

24 փետրվարի 2018 թվականի N 2 նիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Ծաղկաշեն համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքի ավագանու 2018թ-ի փետրվարի 24-ի թիվ 2 հերթական նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳԸ

1. Հ Հ Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքի ղեկավարի հաղորդումները 2017թ-ի Ծաղկաշեն համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մասին :
2. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքի ավագանու անդամ Հրայր Հակոբյանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին :
3. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքի տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:
4. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքի տարածքում գտնվող տնամերձ հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:
5.<<ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրով>> Ծաղկաշեն համայնքի կողմից ծրագրի վարկային պարտավորությունների վճարումների կատարման հարցի մասին

Կողմ - 4 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1.Խաչատրյան Կամո
2.Պետրոսյան Պետրոս
3. Օհանյան Ցոլակ
4 .Օհանյան Էդիկ

Համայնքի ղեկավար՝ Գ. Կարապետյան

Աշխ. Քարտուղար՝ Հ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Ծաղկաշեն 3-րդ փող. N 31
էլ-փոստ tsaghkashen.gegharquniq@mta.gov.am
Հեռ. 077 870323
27.02.2018թ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 6

24 փետրվարի 2018 թվականի N 2 նիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ 2017Թ-Ի ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ , 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետերի պահանջներով՝ Ծաղկաշեն համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքի ղեկավարի հաղորդումը 2017թ-ի Ծաղկաշեն համայնքի տեղական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության ընթացքի մասին համաձայն հավելվածի 1-ի և 2-ի :
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 4 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1.Խաչատրյան Կամո
2.Պետրոսյան Պետրոս
3. Օհանյան Ցոլակ
4 .Օհանյան Էդիկ

Համայնքի ղեկավար Գ. Կարապետյան
Աշխ. Քարտուղար Հ. Սարգսյան

Հաստատված է Ծաղկաշեն համայնքի ավագանու
24 Փետրվարի 2018 թ.
Թիվ 6 որոշմամբ
/ հավելված 1 /

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Եկամուտների վերլուծություն

Ծաղկաշեն համայնքի 2017 թ-ի բյուջեն եկամուտների գծով կատարվել է 96.7 %-ով , բյուջեյով նախատեսված 14620.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 14132.1 հազար դրամ : Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի եկամուտները աճել է 137.4 հազար դրամով :
---Սեփական եկամուտների գծով կատարվել է 89.6 %-ով , բյուջեյով նախատեսված 4698.5 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 4210.6 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 137.4 հազար դրամով , որը հիմնականում կազմված է այլ եկամուտների մուտքերի ավելացմամբ :
--- Պաշտոնական դրամաշնորների՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գծով կատարվել է 100 %, նախատեսված 9921,5 հազար դրամը հատկացվել է ամբողջությամբ :
---Բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 213.3 հազար դրամ :

1.1 Վարչական բյուջեի եկամուտները

Վարչական բյուջեի մասով կատարվել է 96.7%-ով՝
Գույքահարկ համայնքի վարչական տարածքներում գտնվող շենք շինությունների համար 23.0 հազար դրամ , հաստատված պլանի դիմաց փաստացի մուտքագրվել է 15.3 հազար դրամ , կատարվել է 66.4%-ով նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 0.8 հազար դրամ :
-- Հողի հարկ համայնքի վարչական տարածքներում գտնվող հողերի համար 2470.3 հազար դրամ հաստատված պլանի դիմաց փաստացի մուտքագրվել է 1552.6 հազար դրամ , կատարվել է 62.8%-ով , նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 473.5 հազար դրամով:
-- Գույքահարկ փոխադրամիջոցների համար 534.8 հազար դրամ հաստատված պլանի դիմաց փաստացի մուտքագրվել է 1157.6 հազար դրամ , կատարվել 214.4%-ով , նախորդ տարվա համեմատությամբ աճել է 179.2 հազար դրամով :
-- Տեղական տուրքերի համար 160.0 հազար դրամ հաստատված պլանի դիմաց փաստացի մուտքագրվել է 35.0 հազար դրամ , կատարվել է 21.9%-ով նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 5.0 հազար դրամով:
-- Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներից եկամուտները կատարվել են 96%-ով , նախատեսված 1510.4 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 1450.3 հազար դրամ , նախորդ տարվա համեմատությամ աճել է 437.7 հազար դրամով :
-- Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան նախատեսված 9921.5 հազար դրամի դիմաց փաստացի տրվել է 9921.5 հազար դրամ , կատարվել է 100 %-ով :
վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 206.2 հազար դրամ :

1.2 Ֆոնդային բյուջեի եկամուտներ

Համայնքի սեփականություն համարվող հողի օտարումից մուտքագրվել է 32.0 հազար դրամ : Ֆոնդային բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմում է 213.3 հազար դրամ :

2. Ծախսերի վերլուծություն

Ծաղկաշեն համայնքի 2017 թվականի բյուջեն ծաղսերի գծով կատարվել է 90.8 %-ով , նախատեսված 14833.3 հազար դրամի դիմաց ծաղսերը կազմել են 13464.8 հազար դրամ , այդ թվում՝

ա. Վարչական բյուջեյի մասով 92.3 %-ով նախատեսված 14620.0 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 13496.8 հազար դրամ :

բ. Ֆոնդային բյուջեի մասով նախատեսված 563.3 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել :

2.1 Վարչական բյուջեի ծախսեր

Ընթացիկ ծախսերը Ծաղկաշեն համայնքի 2017 թվականի բյուջեյում նախատեսված 14620.0 հազար դրամի դիմաց կազմել է 13496.8 հազար դրամ կամ կատարվել է 90.8 % -ով , որը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 490.8 հազար դրամով :

-- ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը նախատեսված 12706.8 հազար դրամի դիմաց կազմել է 12223.8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 92.1 % : 2016 թ-ի համեմատությամբ աճել է 201.9 հազար դրամով : Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերի մեջ աշխատակազմի պահպանման ծախսերը նախատեսված 12611.8 հազար դրամի դիմաց կազմել են 12208.8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 92.7 % ; 2016 թ-ի համեմատությամբ աճել է 211.5 հազար դրամ :

-- Տնտեսական հարաբերությունների բնագավառով նախատեսված 200.0 հազար դրամի դիմաց ծախսերը կատարվել է 198.5 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 99.3 % -ով , 2016 թ-ի համեմատությամբ նվազել է 1124.0 հազար դրամով :

-- Շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը նախատեսված 48.2 հազար դրամի դիմաց կազմել են 36.0 հազար դրամ կամ կատարողականը կազմում է 74.7% : 2016 թվականի համեմատությամբ նվազել է 12.2 հազար դրամով :

-- Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության գծով ծախսերը նախատեսված 195.0 հազար դրամի դիմաց կազմել են 189.4 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 97.1% : 2016 թ-ի համեմատությամբ աճել է 159.4 հազար դրամով :

--Հանգիստ , մշակույթ և կրոն բնագավառով 2017 թ-ին բյուջեյով նախատեսված 120.0 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել է 120.0 հազար դրամ կամ կատարողականւ կազմել է 100% : 2016 թ-ին նախատեսված ծախս պլանավորված չկա:

-- Կրթության բնագավառով 2017 թ-ին բյուջեյով նախատեսված 100.0 հազար դրամի դիմաց ծախս ը կազմել է 50.0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 50%-ով: 2016թ-ին նախատեսված ծախս պլանավորված չկա :

--Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը նախատեսված 400.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 400.0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 100 % : 2016թ-ի համեմատությամբ փաստացի ծախսը նվազել է 50.0 հազար դրամով:

--Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդը նախատեսված 500.0 հազար դիմաց

կազմել են 279.0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 55.8 % : 2016թ-ի համեմատությամբ փաստացի ծախսը աճել է 164.0 հազար դրամով :

2.2 Ֆոնդային բյուջեի ծախսերը

Ֆոնդային բյուջեի ծաղսերը Ծաղկաշեն համայնքի 2017 թ-ի բյուջեում նախատեսված 563.3 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել , 2016թ-ի փաստացի ծախսերը կազմել է 1507.0 հազար դրամ :

Ըստ տնտեսագիտական դասակարգմամբ Ծաղկաշեն համայնքի 2017թ-ի բյուջեի ծախսերը կատարվել են՝

--Աշխատավարձի հոդվածով նակատեսված 11544.0 հազար դրամի դիմաց ծաղսերը կազմել են 11422.2 հազար դրամ , կատարվել են 98.9%-ով : Նախորդ տարվա համեմատությամբ փաստացի ծաղսերը նվազել է 69.3 հազար դրամ :

-- Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար նախատեսված 1677.8 հազար դրամի դիմաց ծաղսերը կազմել են 1309.6 հազար դրամ , կատարվել են 78.1 % -ով : Նախորդ տարվա համեմատությամբ փաստացի ծաղսերը աճել է 759.2 հազար դրամով :

--Դրամաշնորհների գծով նախատեսված 100.0 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 50.0 հազար դրամ , կատարվել են 50 %-ով : Նախորդ տարվա համեմատությամբ փաստացի ծաղսերը նվազել է 1272.5 հազար դրամով :

--Սոցիալական նպաստների գծով նախատեսված 400.0 հազար դրամի դիմաց ծաղսերը կազմել են 400.0 հազար դրամ , կատարվել է 100 %-ով : Նախորդ տարվա համեմատությամբ փաստացի ծաղսերը նվազել է 50.0 հազար դրամով :

--Այլ ծախսերի գծով նախատեսված 548.2 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 315.0 հազար դրամ , կատարվել են 57.5 %-ով : Նախորդ տարվա համեմատությամբ փաստացի ծախսերը աճել է 141.8 հազար դրամով:

-- Ոչ ֆինանսական ակտիվների գծով նախատեսված 563.3 հազար դրամի դիմաց փաստացի ծախս չի կատարվել : Նախորդ տարվա փաստացի ծախսերը կազմել է 1507.0 հազար դրամ :

3.Ծաղկաշեն համայնքի 2017թ-ի բյուջեի կատարման արդյունքով պարտքեր չեն առաջացել :

Ծաղկաշեն համայնքի ղեկավար / / Գ. Կարապետյան

Աշ. քարտուղար / / Հ. Սարգսյան

Հավելված 2
Ծաղկաշեն համայնքի ավագանու
2018 թ-ի փետրվարի 24-ի N 6 որոշում

ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1 ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

/ հազար դրամ /

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Բյուջեով նախատեսված	Ծրագիր 12 ամիս	Փաստացի 12 ամիս	Կատար-վել է %
	Ընդամենը եկամուտներ	14620.0	14620.0	14132.1	96.7
Ա.	***Սեփական եկամուտներ՝ որից***	4698.5	4698.5	4210.6	89.6
1	Գույքահարկ շենք շինությունների համար	23.0	23.0	15.3	66.5
2	Հողի հարկ	2470.3	2470.3	1552.6	62.9
3	Գույքահարկ փոխադրամիջոցներից	534.8	534.8	1157.5	216.4
4	Տեղական տուրքեր	160.0	160.0	35.0	21.9
5	Վարչական գանձումներ			130.7	
6	Համայնքի սեփ. հողերի վարձ. վճար	1510.4	1510.4	1319.5	87.4
Բ.	Ընթացիկ տարվա համահարթ. դոտացիա	9921.5	9921.5	9921.5	100.0

2 ԾԱԽՍԵՐ

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Տնտեսագիտական դասակարգման	Բյուջեով նախատեսված	Փաստացի 12 ամիս	Կատար-վել է %
1	Աշխատավարձ և հավելավճար	4111	11144.0	11022.2	98.9
2	Պարգևատրումներ	4112	400.0	400.0	100.0
3	Էներգետիկ ծառայություններ	4212	700.0	487.6	69.7
4	Կապի ծառայություններ	4214	126.0	63.2	50.2
5	Համակարգչային ծառայություններ	4232	15.0	15.0	100.0
6	Տեղեկատվական ծառայություններ	4234	178.0	92.0	51.7
7	Մասնագիտական ծառայություններ	4241	45.0	39.5	87.8
8	Շենքերի և կառույցների ընթ, նորոգ.և պահպանում	4251	350.0	348.5	99.6
9	Մեք. և սարք. ընթ. նորոգ. և պահպանում	4252	30.0	30.0	100.0
10	Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	113.8	113.8	100.0
11	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	120.0	120.0	100.0
12	Ընթ. դրմաշնորհներ պետ. և համ. ոչ առևտր. կազ.	4237	100.0	50.0	50.0
13	Այլ նպաստներ բյուջեից	4729	400.0	400.0	100.0
14	Այլ հարկեր	4822	48.2	36.0	74.7
15	Պահուստային միջոցներ	4891	850.0	279.0	32.8
	Ընդամենը ընթացիկ ծախսեր		14620.0	13496.8	92.3

3 ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐ

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ		Բյուջեով նախատեսված	Փաստացի 3-րդ եռամսյակ	Կատար-վել է %
1	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներ		350.0	0.0	0.0
2	Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբիազատ մնացորդ		7.1		0.0
3	Ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդ		206.2		0.0
	Ընդամենը ֆոնդային բյուջե		563.3		0.0

4 ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Տնտեսագիտական դասակարգման	Բյուջեով նախատեսված	Փաստացի 3-րդ եռամսյակ	Կատար-վել է %
1	Վարչական սարքավորումներ	5122	563.3	0.0	0.0
	Ընդամենը ծախսեր		563.3	0.0	0.0

Ծաղկաշեն համայնքի ղեկավար՝ Գ. Կարապետյան

Աշխ. քարտուղար՝ Հ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Ծաղկաշեն 3-րդ փող. N 31
էլ-փոստ tsaghkashen.gegharquniq@mta.gov.am
Հեռ. 077 870323
27.02.2018թ

ՈՐՈՇՈՒՄ N7

24 փետրվարի 2018 թվականի N 2 նիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՀՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ, 19-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Հրայր Հակոբյանի դիմումը համայնքի ավագանու անդամի իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին՝

Ծաղկաշեն համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Վաղաժամկետ դադարեցնել ՀՀ Գեղարքունիքի մազի Ծաղկաշեն համայնքի ավագանու անդամ՝ Հրայր Հակոբյանի լիազորությունները, զինված ուժերում ծառայության անցնելու պատճառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
3. Արձանագրությունը ուղարկել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան:

Կողմ - 4 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1.Խաչատրյան Կամո
2.Պետրոսյան Պետրոս
3 Օհանյան Ցոլակ
4 Օհանյան Էդիկ

Համայնքի ղեկավար՝ Գ. Կարապետյան

Աշխ. Քարտուղար՝ Հ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Ծաղկաշեն 3-րդ փող. N 31
էլ-փոստ tsaghkashen.gegharqunig@mta.gov.am
Հեռ. 077 870323
27.02.2018թ

ՈՐՈՇՈՒՄ N 8

24 փետրվարի 2018 թ-ի N 2 նիստ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ-ի դեկտեմբերի 29-ի << Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին >> թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ-ի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված << Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> անդամների՝ ՀՀ մշակույթի 03/14.2/225-18, ՀՀ բնապահպանության 3/02.2/30021-18, ՀՀ գյուղատնտեսության Աշ2/ԱԲ-2/540-18, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների 07/25.2/350-18, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների 05/16.3/359-18, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 02/14.1/1506-18 նախարարությունների, ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի 06/11/235-18, ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ՆԳ/225-18 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը դրական եզրակացությունը և ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի , 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ Ծաղկաշեն համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.ՀՀ Գեղարքունիքի մազի Ծաղկաշեն համայնքի վարչական տարածքում 05-046-0111 ծածկագրի տակ գտնվող համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.423408հա վարելահողը փոխադրել՝ նպատակային նշանակությունը բնակավայրի , գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման:

2. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ կառավարության առնընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակության իրավունքի պետական գրանցում կատարելու համար :

3. Պետական գրանցում ստանալուց հետո հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը ընդգրկել համայնքի հողային հաշվեկշռում:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 4 Դեմ – 0 Չեռնպահ – 0

1.Խաչատրյան Կամո
2.Պետրոսյան Պետրոս
3 Օհանյան Ցոլակ
4 Օհանյան Էդիկ

Ծաղկաշեն համայնքի ղեկավար / / Գ. Կարապետյան

աշխ. քարտուղար / / Հ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Ծաղկաշեն 3-րդ փող. N 31
էլ-փոստ tsaghkashen.gegharquniq@mta.gov.am
Հեռ. 077 870323
27.02.2018թ

ՈՐՈՇՈՒՄ N 9

24 փետրվարի 2018 թ-ի N 2 նիստ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի 06.02.2018թ-ի N 01/11.1/457-18 գրության և ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի , 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով `

Ծաղկաշեն համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.ՀՀ Գեղարքունիքի մզի Ծաղկաշեն համայնքի վարչական տարածքում 05-046-0018-0005 ծածկագրի տակ գտնվող 0.24 հա տնամերձ հողամասը փոխադրել՝ նպատակային նշանակությունը բնակավայրի , գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման:

2. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ կառավարության առնընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակության իրավունքի պետական գրանցում կատարելու համար :

3. Պետական գրանցում ստանալուց հետո հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը ընդգրկել համայնքի հողային հաշվեկշռում:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 4 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1.Խաչատրյան Կամո
2.Պետրոսյան Պետրոս
3 Օհանյան Ցոլակ
4 Օհանյան Էդիկ

Ծաղկաշեն համայնքի ղեկավար / / Գ. Կարապետյան

աշխ. քարտուղար / / Հ. Սարգսյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԾԱՂԿԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ Էլ-08407086-ՊՈՍՏԱՊԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Ծաղկաշեն 3-րդ փող. N 31
էլ-փոստ tsaghkashen.gegharquniq@mta.gov.am
Հեռ. 077 870323
27.02.2018թ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 10

24 փետրվարի 2018 թ-ի N 2 նիստ

<< ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՐԻ ԿՈՇՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ >> ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 16-րդ հոդվածների համաձայն, Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի և, մասնավորապես, Ծաղկաշեն համայնքի տարածքում աղբահանության հետագա աշխատանքների բարելավմանն ուղղված Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի միջև 05.04.2016 թվականին կնքված վարկային համաձայնագրից (հետագա տեքստում՝ «Վարկային համաձայնագիր») բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունքների իրականացման ու պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով՝

Ծաղկաշեն համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Պարտավորություն ստանձնել 2020 թվականից մինչև 2030 թվականն ընկած ժամանակատվածում հավասարաչափ մասնաբաժիններով Վարկային համաձայնագրից բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորությունների կատարմանն ուղղված՝ ենթավարկի հիմնական գումարները, հաշվարկված տոկոսագումարները, հանձնավճարները, վերաձևակերպման վճարումները, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից 2018-2019 թվականների ընթացքում Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին վճարված գումարների վճարման առումով:
2. Համաձայն վարկային համաձայնագրի համայնքի կողմից վճարվող գումարը 11 տարվա ընթացքում կազմում է 3,485,877 հհ դրամ , իսկ վճարվող միջինացված գումարը 1 տարվա ընթացքում կազմում է 316,897,9 հհ դրամ
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 4 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1.Խաչատրյան Կամո
2.Պետրոսյան Պետրոս
3 Օհանյան Ցոլակ
4 Օհանյան Էդիկ

Ծաղկաշեն համայնքի ղեկավար / / Գ. Կարապետյան

աշխ. քարտուղար / / Հ. Սարգսյան